

**ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՔՈՒՄ ՉՇԱՀԱԾ ԿՏՐՈՆՆԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԲՈՆՈՒՄԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձինք բոնուս ստանալու նպատակով վիճակահանությունների արդյունքում չչահած կտրոնները կարող են մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը ներկայացնել «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի, «ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակներ և մասնաճյուղեր (այսուհետ՝ բոնուս տրամադրող մարմին):

Նշված ժամկետի ավարտից հետո բոնուսի հաշվարկման և տրամադրման համար դիմումներ չեն ընդունվում:

Օրինակ՝

Ֆիզիկական անձինք 2010 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսներին տրամադրված վիճակահանությունների արդյունքում չչահած կտրոնները բոնուս ստանալու նպատակով բոնուս տրամադրող մարմին կարող են ներկայացվել մինչև 2010 թվականի հունիս ամսվա վերջին աշխատանքային օրը: Հուլիս 1-ին և դրանից հետո 2010թ. առաջին եռամսյակի ընթացքում տրամադրված կտրոնների համար բոնուսի հաշվարկման և տրամադրման դիմումներ չեն ընդունվի:

**ԲՈՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձինք վիճակահանությունների արդյունքում չչահած ՀԴՄ կտրոնների խմբաքանակի դիմաց բոնուս ստանալու նպատակով բոնուս տրամադրող մարմին են ներկայանում անձը հաստատող փաստաթղթով՝ յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնելով բոնուս տրամադրող մարմնի կողմից հաստատված ձևով դիմում, որին կցվում են.

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,


2) ՀԴՄ կտրոնների բնօրինակները, որոնք պետք է՝

ա. համապատասխանեն ՀԴՄ կտրոններին ներկայացվող պահանջներին.

բ. տրամադրված լինեն դրանք բանկին ներկայացնելու եռամսյակին նախորդող եռամսյակի ընթացքում.

գ. կտրոնների դարձերեսներին ստորագրված լինեն դրանք ներկայացնողի կողմից: Խմբաքանակում ներառված կտրոնները իրենց դարձերեսներին պետք է ստորագրված լինեն միայն այն ներկայացնող անձի կողմից: Կտրոնների դարձերեսներին չպետք է լինեն մեկից ավել ստորագրություններ:

Օրինակ՝



Կտրոնի դարձերեսի ստորագրությունը պետք է համապատասխանի այն ներկայացնող ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթում նշված ստորագրությանը:

### **ԲՈՆՈՒՄԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒ**

Բոնուսի ստացման նպատակով ներկայացվող ՀԴՄ կտրոնների խմբաքանակները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) յուրաքանչյուր խմբաքանակ պետք է պարունակի հիսունից մինչև հինգ հարյուր (ներառյալ) կտրոն: Եթե ՀԴՄ կտրոնի դարձերեսին առկա է մեկից ավելի հատուկ համար, ապա խմբաքանակի կազմման համար այն համարվում է մեկ կտրոն,

2) յուրաքանչյուր խմբաքանակում ներառված ՀԴՄ կտրոնների դիմային մասերում արտացոլված գործարքների արժեքների հանրագումարը չպետք է պակաս լինի հարյուր հազար դրամից:

### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Բանկը ներկայացված խմբաքանակի համար բոնուսը հաշվարկվում է խմբաքանակում ներառված կտրոնների վրա արտացոլված գործարքների արժեքների հանրագումարի **ՄԵԿ ՏՈԿՈՄԻ** չափով:

Օրինակ՝

Բոնուս ստանալու նպատակով ներկայացվել են 85 կտրոններ, որոնց վրա արտացոլված գործարքների արժեքների հանրագումարը հավասար է 423520 դրամ: Այս դեպքում բոնուսի գումարը կկազմի 4235 դրամ (423520x1%):

Բոնուս ստանալու նպատակով ներկայացվել են 40 կտրոններ, որոնց վրա արտացոլված գործարքների արժեքների հանրագումարը հավասար է 1.200.000 դրամ: Այս դեպքում բոնուս չի հաշվարկվում և չի վճարվում, քանի որ խմբաքանակում ներառված կտրոնների քանակը չի համապատասխանում սահմանված պահանջներին (50-ից մինչև 500 կտրոն):

### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Բոնուսի ստացման նպատակով ՀԴՄ կտրոնների խմբաքանակում ՉԵՆ ՆԵՐԱՌՎՈՒՄ այն ՀԴՄ կտրոնները, որոնց դարձերեսին առկա են մանր շեղ գծերով չընդհատվող կապույտ եզրաշերտեր, իսկ դարձերեսի երկնիշ սերիան և տեքստը տպագրված են **ԿԱՊՈՒՅՑ** գույնով:

Օրինակ՝

